

ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՂՐԱՎԵՐ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱԿԻՐԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Արդար կառավարում

1. Քաղաքական իրավունքներ

Անկախ փորձագետների խումբը գնահատում է երկրներն ըստ իրական ուժով օժտված պաշտոնյաների ազատ և արդար ընտրությունների, քաղաքական կուսակցություններ ձևավորելու քաղաքացիների հնարավորության (որոնք կարող են արդարացիորեն մրցակցել ընտրություններում), ռազմական գերիշխանությունից, արտաքին ազդեցություններից, ամբողջատիրական կուսակցություններից, կրոնական հիերարխիայից և տնտեսական օլիգարխներից ազատության, ինչպես նաև՝ փոքրամասնությունների քաղաքական իրավունքների: Աղբյուրը՝ Ֆրիդոմ Հաուս:

2. Քաղաքացիական ազատություններ

Անկախ փորձագետների խումբը գնահատում է երկրներն ըստ ազատ և արդար ընտրությունների անցկացման ինքնարտահայտման ազատության, շփման և կազմակերպությունների ստեղծման իրավունքի, օրենքի գերակայության և մարդու իրավունքների, անձի ինքնորոշման և տնտեսական իրավունքների: Աղբյուրը՝ Ֆրիդոմ Հաուս:

3. Կոռուպցիայի վերահսկողություն

Ցուցանիշը գնահատում է վարկանիշավորման ենթակա երկրներն ըստ «գործն արած լինելու համար» լրացուցիչ վճարների տրման հաճախականության, գործարար միջավայրի վրա կոռուպցիայի ազդեցության, քաղաքական ոլորտում կոռուպցիայի և պետական կառավարման ապարատի հետ բիզնեսի սերտաճման: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի ինստիտուտ:

4. Կառավարության արդյունավետություն

Չուցանիշը գնահատում է վարկանիշավորման ենթակա երկրներն ըստ մատուցվող հանրային ծառայությունների որակի, քաղաքացիական ծառայության որակի և քաղաքական ճնշումից անկախության, ինչպես նաև կայուն քաղաքականությունների պլանավորելու և իրականացնելու կառավարության հնարավորության: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի ինստիտուտ:

5. Օրենքի գերակայություն

Ցուցանիշը գնահատում է վարկանիշավորման ենթակա երկրներն ըստ հանրության իրազեկության մակարդակի և հասարակության՝ իրավական դաշտի առումով վստահության, անձի իրավունքների հետ կապ ունեցող և այլ կարգի իրավախախտումների, արդարադատության արդյունավետության և կանխատեսելիության, ինչպես նաև պայմանագրերի իրավունակության: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի ինստիտուտ:

6. Չայնի իրավունք և հաշվետվողականություն

Չուցանիշը գնահատում է վարկանիշավորման ենթակա երկրներն ըստ քաղաքացիական ազատությունների պաշտպանությանը կոչված ինստիտուտների կարողությունների,

կառավարության ընտրությանը քաղաքացիների մասնակցության աստիճանի և զանգվածային լրատվության միջոցների անկախության: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի ինստիտուտ:

Ներդրումներ մարդկային կապիտալում

1. Պատվաստումներ

DPT3-ի և կարմրուկի դեմ կատարվող պատվաստումների միջին մակարդակը՝ ըստ ամենավերջին տարվա համար առկա տեղեկատվության: Աղբյուրը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն:

2. Պետական ծախսերը առողջապահության ոլորտում

Առողջապահության վրա բոլոր մակարդակներում կառավարության կողմից կատարվող ծախսերի և ՀՆԱ-ի հարաբերությունը: Աղբյուրը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն:

3. Պետական ծախսերը հանրակրթության ոլորտում

Հանրակրթության ոլորտում կառավարության կողմից բոլոր մակարդակներում կատարվող ընդհանուր ծախսերի հարաբերությունն է ՀՆԱ-ին: Աղբյուրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ / ազգային աղբյուրներ:

4. Աղջիկների հանրակրթության մակարդակ

Հանրակրթական դպրոցներն ավարտող իգական սեռի ներկայացուցիչների քանակի հարաբերությունն է ընդհանուր բնակչության համապատասխան տարիքային խմբի թվի վրա: Աղբյուրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ:

5. Բնական ռեսուրսների կառավարում

Այս նորացված բազմաշերտ ցուցիչն իր մեջ ներառում է 4 չափորոշիչ. էկոլոգիական պաշտպանվածություն, սանիտարական պայմանների, ջրի մատչելիություն, մանկական մահացություն: Աղբյուրը՝ CIESIN / Yale:

Տնտեսական ազատություններ

1. Կարգավորման որակի գնահատական

Այս ցուցանիշը արտահայտում է կառավարության՝ մասնավոր հատվածի զարգացումը խրախուսող քաղաքականություն վարելու կարողությունը: Այն իր մեջ ներառում է մինչև 14 տարբեր տեսակի հարցումների ու հետազոտությունների ամբողջականություն, որը դասակարգում է երկրները հետևյալ սկզբունքներով. բիզնեսի կարգավորման բեռ, գների կարգավորում, կառավարության դերը տնտեսության մեջ, արտասահմանյան ներդրումներ և մի շարք այլ ոլորտներ: Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի ինստիտուտ:

2. Հողային իրավունք և հասանելիություն

Այս ցուցանիշը գնահատում է՝ թե ինչ աստիճանի ներդրում ունեն կառավարությունները ներդնում հողերի տնօրինման ապահովությունը երաշխավորելու հարցում, ինչը բերում է հողերի բերքատվության ուղղությամբ երկարաժամկետ գործողությունների և նվազեցնում է այնպիսի

կարճաժամկետ գործողությունների հավանականությունը, որոնք բացասական ազդեցություն կունենան շրջակա միջավայրի վրա: Այս ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ երեք չափորոշիչների հիման վրա. հողային հասանելիություն, սեփականության գրանցման համար անհրաժեշտ օրերի թիվը, սեփականության գրանցման համար անհրաժեշտ գումարը: Հողային հասանելիությունը այստեղ կազմում է ցուցանիշի 50 տոկոսը, սեփականության գրանցման օրերի և սեփականության գրանցման համար անհրաժեշտ գումարը՝ 25-ական տոկոս: Աղբյուրները՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ և Միջազգային ֆինանսական կորպորացիա:

3. Բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրեր և ծախսեր

Ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ երկու չափորոշիչների հիման վրա. բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի թիվ և բիզնես սկսելու համար անհրաժեշտ ծախսեր: Տեղական իրավաբաններն ու այլ մասնագետներ հետազոտում են այն առանձնահատկությունները, որոնք ազդում են նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ օրերի և ծախսերի վրա: Աղբյուրը՝ Միջազգային ֆինանսական կորպորացիա:

4. Առևտրային քաղաքականություն

Գնահատվում է երկրի բացվածությունը միջազգային առևտրի համար՝ հիմնված տարիքների միջին մակարդակի և առևտրի վրա ոչ տարիքային սահմանափակումների վրա: Աղբյուրը՝ Հերիթիջ Ֆաունդեյշն:

5. Գնաճ

Սպառողական գների ինդեքսի վերջին 12 ամսվա փոփոխությունները հրապարակվում են ԱՄՆ-ի կամ համապատասխան ազգային վիճակագրական ծառայությունների կողմից: Աղբյուրը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ:

6. Հարկաբյուջետային քաղաքականություն

ՀՆԱ-ում ընդհանուր բյուջեի դեֆիցիտը՝ միջինացված վերջին 3 տարվա համար: Տվյալները ուղղակիորեն տրամադրվում են համապատասխան կառավարությունների կողմից, սակայն ստուգվում են այլ աղբյուրների հետ և հրապարակվում: Աղբյուրը՝ ազգային աղբյուրներ և Արժույթի Միջազգային Հիմնադրամ: